ՄԺԵ.

Յովսէփ եպս. Ստեփանեանի երկասիրութիւնը՝ ինչպէս յայտնի է վաւերաթղթէս՝ վկայաբանական գրուածք մ'է։ Ան կը խօսի գլխաւորապէս Ս. Սահակ Պարթև Հայրապետի ժամանակակից Ս. Մարութա եպս.ի վրայ, որուն մեծագործութիւններէն մին եղած է շրջիլ զանազան երկիրներ՝ մարտիրոսաց նշխարներ հաւաքելու ու բերելու իր աթոռանիստ երկիրը՝ Ծոփաց քաղաքը, զոր ինքը շինել տալով կոչեր էր մարտիրոսաց քաղաք, կամ որ նոյն է՝ Նփրկերտ կամ Նեփերկերտ, ռամկօրէն Մուրֆարղին, Մուֆարղին, Մուփարկին, ասորերէն՝ մայփարգին կամ մայֆէրգաղ։ Սոյն նշխարները Ս. Մարութա հաւաքած է ի Պարսկաստան և արևելեան և արևմտեան քաղաքները և ճգնաւորաց վանքերու մէջ։ Իր հաւաքած վկայից նշխարներուն թիւն է 280,000[1]։

Գերարգելի Աբբայ հայր Ստեփանոս Վրդպտ.ի յոյժ բազում ողջոյն և սէր

Ընկալայ զգիր զերապատիւ հայրութեան քո, գրեալ սեպտեմբերի 9, զոր ընթերցեալ իմացայ զամենայն և իսկոյն գնացեալ 6 սփութով գնեցի և թէլով կապեցի և ի վերայ նորա որպէս առաջին կերպն գրեցի և նոյն գրքածախին յանձնեցի։ Եւ փափագիմ զի նախ քան զմահն իմ տեսանել զնոյն երկու հատորսն հայերէն տպագրեալք և ի յամենայն յարևելս տարածեալք առ ի մխիթարութիւն և սբոփումն տառապեալ ազգի մերում որ ոչ ունին ի ձեռն պատրաստ այսպիսի քաղաքական յարացոյց սրբոց մարտիրոսաց որով ընթերցմամբ արիանալ մարթասցին. քանզի միայն ի տօնացուցի ի մէջ ապայից տօնեն մարութայի եպիսկոպոսին որ զմարտիրոսաց քաղաքն շինեաց և ժողովեաց բազում նշխարս հազարաց մարտիրոսաց, և եղ մուրֆարղին. և անուանեաց զանուն նորա Նփրկետ. և այլ ճնացեալ պատմութիւնն ոչ գիտեն, թէ նոյն սուրբ եպիսկոպոսն որում տեղոջէ հաւաքեաց զայնչափ սուրբ նշխարսն և զինչ իցեն անուանք նոյն սրբոց մարտիրոսաց. գոնեայ անուանի գլխաւոր եղելոցն ևս ոչ ճանաչեն, որ եթէ ըստ պատշաճի իմանային զհամայնից վասն յոյժ մեծ պատուով տօնէին նոցա և սերտ ի բերան առնէին զանուանս նոցա, և ամենայն գիպուածոջ և նեղութեան օգնութիւն հայցէին ի նոցանէ, որովհետև զաւառական և քաղաքական սուրբք են։ Բայց ես անբասիր առնեմ զազգն իմ վասն չունելոյ նոցա հանգստութիւն ի յարևելս որ այսպիսի իրաց պարապիցին որոնել, և զթագուցեալ գանձն վարուց սրբոց նոցին բովանդակն յայտ անդիման ամենայն ընթերցողաց առնել. այլ ընդ սակաւիկ պատմութեանց ոմանցն որք ի մէջ այսմաւուրացն գտանի, շատացեալք զայլն ոչ որոնեն և ոչ ինչ զանազանել գիտեն ի մէջ ուղիղ և սղալ պատմութեանց։ Արդ՝ ծանիցէ հայրութիւնն ձեր համառօտ բանիւ. առաջին հատորի ասորւոյ լեզուի հեղինակն Յովսէփիոս Կեսարացին Պաղէստինեան հռչակաւոր պատմիչն եկեղեցական թուականութեան և ժամանակական պատմութեանց. և հին հեղինակն վարուց սրբոյն սիմէօնի սիւնակեցւոյ է Կոզմայ քահանայն, զոր զկնի հնգետասան ամի վախճանմանցն սրբոյն երկարապատում գրեաց զվարս նորա. որ և լատինացիք ի հնումն ոչ ունէին զամենայն յիշեցեալսն համանման ըստ ամենայնի. այլ անուն նոյն գրեանցն ունէին և զգրեանս ոչ, մինչև Աստուած այց արար ի ժամանակի վերջին դարի այսմիկ ի լոյս ածիլ տպագրութեան երկու լեզուէ։ Երկրորդ պատշաճ վարկայ զեկուցանել ձեզ զիր իմն, զոր լատինէվար եղեալ է մօնսինեօր օվէտիօն վասն ոմանց սրբոց, թէ սոքա միայն ոչ է տեսեալ զանուանս առ լատինացիս կամ առ յոյնս. սակայն զկնի տպագրու-

---

1. Ագերեան «Վարք Սրբոց» Հար. ԺԲ. 585-619։